

Institute public diplomacy

NagornoKarabakh, Stepanakert Saroyan 8. Tel. (+374) 972693
e-mail: rcstepe@yahoo.com

Ժողովրդական դիվանագիտության ինստիտուտ

Լեռնային Ղարաբաղ, ք. Ստեփանակերտ, Սարոյան 8, հեռ. (+374) 972693
e-mail: rcstepe@yahoo.com

Եզրակացություն

ԼՂՀ Նախագահի ընտրությունների քվեարկության ընթացքի վերաբերյալ դիտորդական առաքելության մասին

Մենք՝ տեղական դիտորդներս, ծանոթանալով ԼՂՀ Սահմանադրությանը և ԸՕ-ին, ներկայացնելով «Արցախի ժողովրդական դիվանագիտության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը, 2012թ. հուլիսի 19-ին իրականացնելով դիտորդական առաքելություն Ստեփանակերտ քաղաքի 7, 10, 17, 29, 30, 33 ընտրատեղամասերում, հանգել ենք հետևյալ եզրակացությանը.

-ԼՂՀ նախագահական ընտրություններն անցան քաղաքական բարձր մրցակցության պայմաններում, հասանելի զանգվածային լրատվամիջոցների համար: Ընտրությունները համարում ենք կայացած, լեգիտիմ, ազատ, թափանցիկ, ժողովրդավար, արդար, երկրի ընտրական օրենսդրությանը լիովին համապատասխան: Ընտրությունները համապատասխանում են նաև ժողովրդավար ընտրությունների անցկացման միջազգային չափանիշներին:

-Ընտրողները քվեարկեցին իրենց կամքով, ոչ մի խախտում չարձանագրվեց, որը կարող էր փաստել մարդկանց ազատ տեղաշարժը սահմանափակելու մասին:

-Մեր կողմից լուրջ ընտրախախտումներ ընտրությունների օրը չեն արձանագրել, իսկ որոշ թերություններ ընդամենը տեխնիկական բնույթ են կրել և կապված են եղել անձը հաստատող փաստաթղթերի հետ, որոնք վերացվել են օրենքի շրջանակներում: Մեր կողմից գրեթե բոլոր ընտրատեղամասերում արձանագրվել է ընտրողների հերթեր:

-Ընտրացուցակները համապատասխանում էին գործող օրենքներին: Առանձին անձշտություններ, որոնք եղել են, վերացվել են տեղերում՝ ընտրական հանձնաժողովների անդամների միջամտությամբ:

-Ոչ ոք չէր խոչընդոտում ընտրական գործընթացին, քվեատուփերը լցվում էին օրենքով հաստատված նորմերի համապատասխան:

-ԼՂՀ Նախագահի ընտրության թեկնածուների վստահված անձինք կատարել են իրենց հանձնարարականները ըստ ընդունված նորմերի:

-Գրեթե բոլոր ընտրատարածքներում ընտրական հանձնաժողովների կողմից դիտորդների նկատմամբ պատշաճ վերաբերմունք ցուցաբերվեց: Ընտրական հանձնաժողովի անդամները ընտրողների մոտ առաջացած բոլոր հարցերին պատասխանում էին բավականին մեծ համբերությամբ, բացատրելով բոլոր մանրամասները: Մեր կարծիքով ընտրական հանձնաժողովների գրեթե բոլոր անդամները լիարժեք տիրապետում են ԼՂՀ ընտրական օրենսգրքին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ընտրատարածքային հանձնաժողովները շատ լավ էին պարտրաստված:

-Ընտրողները բավարարված էին ընտրությունների ընթացքով:

-Ընտրությունները ընթացել են ԸՕ-ով սահմանած ժամերի շրջանակում. առավոտյան ժամը 8:00 բոլոր ընտրատեղամասերը բացվել են, իսկ 20:00՝ բոլորը փակվել են:

1. Սարգսյան Ալվարդ
2. Մովսեսիան Էլինա
3. Հարությունյան Լիլիթ
4. Գրիգորյան Նարինե

